ՀԵՐՈՍ-ՓՐԿՉԻ ԿԵՐՊԱՐԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ *

ՀՏԴ 070 *DOI: 10.52063/25792652-2023.1.16-100*

ԼԻԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի
նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
martirosanliana413@gmail.com
ORCID: 0009-0009-6009-4604

Հոդվածում դիտարկվում են սոցիալ-հոգեբանական ներգործության հիմնական հնարքները և տեխնոլոգիաները, որոնք օգտագործվում են զանգվածային լրատվամիջոցներում հերոս-փրկչի մասին միֆը ստեղծելիս:

Հոդվածը նպատակ է հետապնդում բացահայտելու հերոս-փրկչի միֆի առանձնահատկությունները, որոնք հիմնավորված են հայ իրականությունից վերցված օրինակների միջոցով:

Աշխատանքի խնդիրն է ներկայացնել մի շարք օրինակներ, որոնք բացահայտում են քաղաքական գործչի կերպարից քաղաքական առաջնորդի կերպարի ստեղծման ճանապարհը, ինչպես նաև որոշարկել հերոս-փրկչի միֆի կիրառելիության դերը քաղաքական գործընթացներում:

Հոդվածի մեթոդաբանական հիմքը կազմում են վերլուծության, համեմատության և ընդհանրացման մեթոդները:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառել ենք նաև արխիվային տեսանյութերի, ինչպես նաև այլ գիտական նյութերի համադրման և պատմականության մեթոդները:

Կատարված հետազոտությունից պարզ դարձավ, որ քաղաքական յուրաքանչյուր սուբյեկտ միֆականացման կարիք է զգում: Քաղաքական միֆերի արդիականությունը մեծանում է սոցիալական ճգնաժամերի ժամանակ, երբ հասարակությունն ունի համախմբող խորհրդանիշների պահանջ: Ինչպես դավադրության միֆը, այնպես էլ սա, քաղաքականության մեջ դառնում է հասարակության և սուբյեկտի հաղորդակցման ձև:

Ամփոփելով սույն հոդվածը՝ կարող ենք պնդել, որ հերոս-փրկչի միֆը քաղաքական ուժերին վերագրում է խարիզմատիկ հատկանիշներ, ձևավորում որոշակի իմիջ, առանց որի այն չի կարող սիրվել հանրային լայն շերտերի կողմից:

Հիմնաբառեր՝ *Միֆեր, քաղաքականություն, քաղաքական գործընթաց, հերոս-փրկիչ, հակահերոս, քաղաքական առաջնորդ, իմիջ:*

Նախաբան

Քաղաքացիական հասարակության ձևավորման, տեխնոկրատական դետերմինիզմի աննախադեպ զարգացման, սոցիոմշակութային ճգնաժամերի խորացման պայմաններում ժամանակակից գիտությունների, մասնավորապես սոցիալական փիլիսոփայության, հոգեբանության և քաղաքագիտության համար մեծ

* Հոդվածը ներկայացվել է 20.02.2023թ., գրախոսվել՝ 25.02.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

հետաքրքրություն է ներկայացնում կոլեկտիվ գիտակցության դրսևորում համարվող երևույթներից մեկը՝ միֆը: Միֆերի և առասպալների մասին պատկերացումներն ունեն խոր արմատներ, վերջիններս լայն ուսումնասիրության են ենթարկվել հայտնի փիլիսոփաների և մտածողների կողմից (Հերբերտ Սփենսեր, Կարլ Յունգ, Մաքս Շելեր, Մարտին Հայդեգեր, Էռնստ Կասիրեր, Հենրի Թյուդո և այլք): Թվում է, թե լուսավորությունից սկիզբ առած, բանականության ճրագով լուսավորվող ժամանակակից մարդն այլևս չի կարող կապվել միֆերի և առասպելների հետ, սակայն տեխնոլոգիական առաջընթացը, մարդու աշխարհայացքի մեջ տեսողական բաղադրիչի ավելացումը, պատկերավոր մտածողությունը՝ կապված մուլտիմեդիա տեխնոլոգիաների հնարավորությունների հետ, ոչ միայն ստեղծում, այլև խորացնում են միֆերի և առասպելների ազդեցության տիրույթը: Մարդկության առջև ծառացած խնդիրները՝ քաղաքական, սոցիալական, մշակութային ճգնաժամեր, օրեցօր ահագնացող բնաջնջման սպառնալիքներ, «սառը պատերազմներ», անհատի ինքնաօտարման հարցեր, և օդում առկախ պատասխաններ պահանջող հարցերը, իրենց հերթին, մեծացնում են դրանց կիրառման անհրաժեշտությունը, քանզի առասպելները, լինելով պարզունակացված սոցիալական կառուցվածքներ (քանի որ ամենաքիչն են պահանջում տեսական անդրադարձ և հիմնված են հավատի վրա), ամբոխի մարդու կողմից առավել ընկալելի են, քան ռացիոնալացված բարդ մտակառույցները (Բաբաջանյան 11):

Միֆ եզրույթի ստուգաբանությունը գալիս է հին հունարեն «mythos» բառից, որը թարգմանաբար նշանակում է բառ, խոսք, ժողովրդական վիպական ժանր, որի մեջ գերբնական և չափազանցված ձևով արտացոլվել են աշխարհի վերաբերյալ մարդկանց պատկերացումներն ու ըմբռնումները (Զրբաշյան և Մախչանյան 26): Հայոց լեզվում հաճախ նույնանում են միֆ և առասպել եզրույթները (երկու եզրույթների զուգահեռ կիրառմանը հակադարձում է գրականագետ Վ Ռուդնևը՝ տալով միֆ բառի երեք հիմնական հատկանիշները՝ հնագույն պատմություն, ավանդություն, միֆաստեղծում, միֆաարարում, միֆոլոգիական կոսմոգենեզ, գիտակցության հատուկ վիճակ՝ մշակութաբանորեն և պատմականորեն պայմանավորված ու հիմնավորված: Այս իմաստով հեռանում են միֆ և առասպել հասկացությունները) (Руднев 169): Հոդվածում մենք նույնպես երկու եզրույթները կիրառելիս նկատի ենք առնում միևնույն երևույթները:

Միֆերը գիտակցության՝ մշակութաբանորեն և պատմականորեն հիմնավորված անօտարելի ձևեր են: «Միֆոլոգեման որպես եզրույթ, ներկայացնում է առասպելական սյուժեների, կերպարների ընդհանրական, մնայուն պատկերը և իր տարատեսակ դրսևորումներով լայնորեն կիրառվում է համաշխարհային մշակույթում» (Պետրոսյան 66): Բացի մշակութային ոլորտից, դրանք, լինելով իրականության կառուցարկման կամ վերաիմաստավորման գործիքներ, ակտիվորեն կիրառվում են նաև մերօրյա քաղաքական կյանքում: Հոդվածն անդրադառնում է տարածված քաղաքական միֆերից մեկին՝ հերոս-փրկչի մասին միֆին: Այն ենթադրում է քաղաքական գործչից քաղաքական առաջնորդի ստեղծում: Հոդվածում ուսումնասիրվել են հերոս-փրկչի մասին միֆի առանձնահատկությունները, որոնք կարող են օգնել քաղաքական ուժերին հաջողելու ընտրապայքարում և հասնելու ցանկալի արդյունքի: Դրանք կարող են ստեղծել նոր իրականություն՝ ի չիք դարձնելով մի շարք արմատացած գաղափարներ:

Ֆրանսիացի հետազոտող Ռաուլ Ժիրարդեի կարծիքով՝ միֆերը կարելի է կենտրոնացնել ըստ չորս կատեգորիաների՝ «Դավադրություն», «Հերոս-փրկիչ», «Ոսկե դար» և «Միասնականություն» (Жирарде 48): Վերջիններս հավասարաչափ կարևոր և փոխկապակցված են, սակայն հայ քաղաքական իրականության մեջ առավել լայն տարածում ունի հերոս-փրկչի մասին միֆը: Հոդվածում մենք փորձել ենք դիտարկել հերոս-փրկչի միֆը քաղաքական լիդերության ձևավորման տեսանկյունից, ցույց տալ դրա կիրառելիության կարևորությունն ու բազմազանությունը: Մերօրյա

իրականությունից վերցված օրինակները ավելի համոզիչ են դարձնում առաջադրված գաղափարները: Նախքան քաղաքական լիդերի կերպարին անցնելը հասկանանք՝ ինչ ասել է հերոս-փրկչի միֆ:

«Հերոս-փրկչի» միֆի առանձնահատկությունները

Քաղաքական կյանքը կառուցվում է հեքիաթների սցենարի տրամաբանությամբ: Երկրում տնտեսական ճգնաժամերի, աղքատության բարձր ցուցանիշի և սոցիալական անհավասարության, քաղաքական խմորումների պայմաններում, երբ հանրույթն ունի ընտրություն կատարելու խնդիր, քաղաքական ուժերը ձեռնամուխ են լինում դավադիր կամ թշնամական ուժերի ստեղծման, քանի որ անհրաժեշտ է մեկը, ով իր վրա կկրի ստեղծված իրավիճակի ողջ պատասխանատվությունը: Այլ խոսքով՝ նրանք ստեղծում են թշնամու կերպար, հակահերոս, որ հանդես կգա որպես մեղավոր բոլոր անհաջողությունների համար: Եվ, իհարկե, ի հեճուկս այս ամենի՝ պետք է մեկը, ով հասարակությանը կազատի այդ խնդիրներից: Այս թվացյալ անհնարինության պայմաններում է, որ ծնվում է հերոս-փրկչի կերպարի ստեղծման անհրաժեշտությունը:

Հերոս-փրկիչը միֆական կերպար է, ում հետ կապվում են բոլոր հաջողությունները, և ով պետք է բերի երկար սպասված «ոսկե դարը»: Հերոս-փրկչի կերպարում կարող է հանդես գալ յուրաքանչյուր անձ, պարզապես քաղաքական թիմը պետք է անի ամեն բան, որ վերջինս «օծվի» փրկչին բնորոշ հատկություններով: Այդ ճանապարհին նրանք կարող են օգտագործել բազում մանիպուլյացիոն տեխնոլոգիաներ և գործիքներ: Միֆի կայացման վերջնարդյունքն այն է, որ հերոս-փրկչը սիրվի հանրային լայն շերտերի կողմից, շահի նրանց վստահությունը և, իհարկե, գա իշխանության:

Հերոս-փրկչի կերպարը մարդկության պատմության անբաժան ուղեկիցն է: Նման կերպար կարելի է գտնել գրեթե բոլոր ազգերի առասպելներում, էպոսներում: Սա է պատճառը, որ մասնագիտական գրականության մեջ այս միֆերը հանդես են գալիս որպես առանձին կատեգորիա:

Հերոսական միֆերի մեջ մտնում են մշակութային և երկվորյակային միֆերը: Դրանցում հիմնականում պատկերվում է անհատի ձևավորման և հասարակության մեջ կայացման ընթացքը: Ըստ այս միֆերի՝ հերոսներին բնորոշ են գերմարդկային ուժը, խելքը, մի շարք համամարդկային դրական հատկանիշներ՝ բարություն, կամեցողություն, այլասիրություն,հայրենասիրություն և այլն: Հերոս-փրկչի մասին միֆական սյուժեն նրան վերագրում է զինվորի, առաջնորդի, երբեմն՝ մահապարտի և անգամ պայծառատեսի հատկանիշներ ու բարոյական բարձր որակներ: Այս երևույթն ավելի շատ հայտնի է որպես «անձի պաշտամունք» (Դեմիրճյան 58):

Հերոս-փրկիչը, որպես կանոն, ունի միֆական առաքելություն, որով հանրույթին և՛ մեկ անգամ պիտի ապացուցի իր ընտրյալ լինելը: Նա կարող է ունենալ ընտանիք, ընկերներ, ովքեր օգնում են նրան իր նպատակին հասնելու ճանապարհին, սակայն նա հիմնականում հանդես է գալիս միայնակ, որը մեկ անգամ և՛ հաստատում է նրա ամուր, անկոտրում կամքը: Թվում է, թե հաղթանակը հերոսական կերպարների հետ կապելու գաղափարը վաղուց անցյալում է, սակայն մերօրյա քաղաքական իրադրությունները հակառակն են ապացուցում. այսօր էլ քաղաքական գործիչներին քաղաքական առաջնորդի վերածելու ճանապարհին ուժերը դիմում են, այսպես ասած, «հին» տեխնոլոգիաների: Տեղին է հիշատակել ֆրանսիացի փիլիսոփա Միրչա Էլիադեի տեսությունը, ըստ որի՝ միֆն առաջին հայացքից գերբնական ուժերի սխրագործությունների մասին պատմություն է, որը կտրված է իրականությունից: Սակայն սա միայն առաջին հայացքից, քանզի միֆերի խոր ուսումնասիրությունները բացահայտում են, որ դրանք իրականում ճշմարտություններ են, պարզապես պատված են «գերբնական քողով»: Հեղինակը շարունակում է՝ միֆերը համարելով

ծեսեր, որոնք մարդու առօրյա կյանքի անբաժան մասն են կազմում: Վերջիններս կարող են փոփոխվել, ազատվել հին ձևերից, հարմարվել նոր մշակույթին, բայց ամբողջովին անհետանալ չեն կարող (Элиаде 53): Ինչպես արդեն նշեցինք, որպեսզի հերոսի կերպարը ամբողջանա, քաղաքական ուժերը դիմում են հակահերոսի կամ դավադրության միֆի օգնությանը: Որպես կանոն, միֆական հակահերոսն ունենում է որևէ գաղտնի, դավադրական գաղափար, որը պետք է ի կատար ածի հանրույթի աչքից աննկատ: Իհարկե, այս ամենը չի վրիպում հերոսի աչքից, և նա ձեռնամուխ է լինում «ժողովրդի փրկությանը»: Պատահական չէ, որ հետազոտող Է. Կասսիերը հերոս փրկչի կերպարը համեմատում է մոգի կերպարի հետ, քանզի երկուսն էլ պետք է կարողանան գուշակել ապագան, ինչպես նաև ճիշտ կառավարել մարդկային հույզերը (Кассирер 46):

Հերոս-փրկչի մասին միֆի կիրառումն այսօր հայ քաղաքական գործիչների քաղաքական զինանոցի անփոխարինելի մասն է կազմում: Քաղաքական գործչից քաղաքական առաջնորդի անցման ճանապարհը լի է միֆական կերպարների և երևույթների համադրությամբ: Այստեղ այնքան են միախառնվում իրականն ու առասպելականը, որ դժվար է գտնել իրականության եզրերը: Նման իրավիճակների շնորհիվ էլ նրանք կարողանում են համոզել հանրույթին և նրան մղել որոշակի գործողությունների: Տեղին է ամերիկացի քաղաքագետ Մ. Էդելմանի համեմատությունը, որը առաջ է քաշել քաղաքական թատրոնի գաղափարը: Ըստ հեղինակի՝ քաղաքական գործիչները դերասաններ են, իսկ հանրույթը հանդիսատեսն է: Դերասանների հիմնական նպատակն այն է, որ հանրույթը հավատա իրենց: Միֆական այս պատկերը ստանալուց հետո միայն հայտնվում է հերոսը, որը, ըստ իրավիճակի, կարող է լինել փրկիչ, պաշտպան, արդարության մունետիկ և այլն (Цуладзе 383):

Կարող ենք եզրակացնել, որ հերոս-փրկիչը, հայտնվելով ճգնաժամային իրավիճակներում, հանդես է գալիս որպես հաղթանակի միակ երաշխավոր: Նա ունի «սրբազան» առաքելություն, որի իրագործումից հետո, ինչպես հեքիաթներում, դառնում է այդ երկրի թագավոր: Մերօրյա քաղաքական կյանքում նա, որպես կանոն, հայտնվում է ընտրություններից առաջ, ներկայացնում իր՝ «երկիրը փրկելու» ծրագիրը՝ միայն սեփական անձի հետ կապելով հնարավոր զարգացումն ու առաջընթացը: Դարձնելով նրան սոցիալական լիդեր՝ արհեստականորեն ստեղծվում է որևէ հակահերոս՝ խամաճիկ թեքնածու, ում կողքին ևս մեկ անգամ ընդգծվում են վերջինիս առավելությունները:

Հերոս-փրկիչը որպես քաղաքական առաջնորդ

Քաղաքական գործչից քաղաքական առաջնորդի վերածվելու համար անձը պետք է անցնի որոշակի ճանապարհ: Հանրային կապերի, քաղաքական իմիջով զբաղվող մասնագետները հերոս-փրկչի կերպար ստեղծելու ճանապարհին ուշադրություն են դարձնում մի քանի գործոնների.

Կենսագրություն: Հերոս փրկիչը պետք է ունենա ազդեցիկ անցյալ: Նույնիսկ եթե քաղաքական գործչի անցյալում չկա որևէ առանձնահատուկ դրվագ, նրանք արհեստական իրականություն են ստեղծում՝ դրանով իսկ տալով միֆի ձևավորման մեկնարկը: Այս առումով կան երկու միմյանց հակասող, բայց փոխկապակցված հնարներ: Առաջին դեպքում առաջնորդը պետք է սերի ազնվական ընտանիքից, լինի, օրինակ, որևէ հայտնի քաղաքական գործչի որդի կամ ազգական: Այդ կերպարի լինելությունը ոչ թե պետք է ստվեր գցի նրա վրա, այլ հակառակը՝ դառնա առանձնահատկություն: Մյուս կողմից՝ հերոս-փրկիչը կարող է լինել աղքատ ընտանիքի զավակ, որ, չնայած բազում զրկանքներին, չի կոտրվել և այն, ինչ ունի, ձեռք է բերել սեփական ուժերով:

Հայկական քաղաքական դաշտը նույնպես անմասն չի մնացել այս միֆերից: Մենք դիտարկել ենք երկու բնորոշ օրինակ, երբ հայ քաղաքական գործիչները հանրույթի ուշադրությունը փորձել են գրավել այս հնարի միջոցով: «Արժանի հոր արժանի որդի» կերպարում հանդես է եկել ՀՀ քաղաքական գործիչ, 1999 թվականին Ազգային ժողովի նախագահ եղած Կարեն Դեմիրճյանի որդին՝ Ստեփան Դեմիրճյանը: Միֆի կիրառելիությունն իր գագաթնակետին հասավ մասնավորապես 2003 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ: Նրա վերջին քարոզարշավը ամբողջությամբ կառուցվում էր իր և իր հոր հետ նույնականացման վրա: Իրար հետևից դուրս էին գալիս հոլովակներ, որոնք պատմում էին հոր և որդու կապի մասին: Հոլովակներից մեկում Ս. Դեմիրճյանը ներկայանում է ընտանիքի հետ, ներկայացվում են նրա կինը, երեխաները և մայրը: Հոլովակը պատմում է Դեմիրճյանների ընտանեկան ավանդույթների մասին, ընդ որում՝ Ս. Դեմիրճյանն ինքն է նշում, որ հորից ժառանգել է մեծահոգություն, հանդուրժողականություն և այլ հատկանիշներ: Ս. Դեմիրճյանի մայրը պատմում է, որ իր ամուսինն ու որդին լավագույն ընկերներ էին (Մելքոնյան 108): Պետք է փաստել, որ թեև Ս. Դեմիրճյանը չհաջողեց ընտրապայքարում, բայց հոր անձի համատեքստում դիտարկելը ինչ-որ առումով բարձրացրեց նրա քաղաքական իմիջը և փոխեց հանրույթի կարծիքը նրա մասին: Այս միֆի կայացման ճանապարհին ԶԼՄ ներկայացուցիչները կիրառել էին մի շարք մանիպուլյացիոն տեխնոլոգիաներ: Մասնավորապես օգտագործվել են փոխաբերություններ և համեմատություններ, հեղինակությունների վկայակոչում, վարկանիշների մանիպուլյացիա, փաստերի ընտրանք տեխնոլոգիաները:

Հոր գործի շարունակողի դերում հանդես է եկել նաև 2011-2018 թվականներին Երևանի քաղաքապետի պաշտոնը զբաղեցրած Տարոն Մարգարյանը, որ 2000-2007 թվականներին պաշտոնավարած ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի որդին է: Տ. Մարգարյանի քաղաքական ելույթները միշտ լի են եղել հոր մասին հիշատակումներով: Դրանք կառուցվում են այն գաղափարի շուրջ, որ վերջինս պատասխանատու է հոր հիշատակի առջև և պետք է շարունակի նրա գործը: Ժամանակին արված հանրային հարցումները նույնպես ցույց էին տալիս, որ հասարակության մի ստվար զանգված ընտրում էր Տարոն Մարգարյանին՝ նրա մեջ տեսնելով հորը: Կարող ենք փաստել, որ այս պարագայում ստեղծված միֆն աշխատում էր վերջինիս օգտին:

Ի հեճուկս բերված օրինակների՝ բազում քաղաքական գործիչներ նախընտրում են կենսագրական միֆի հակառակ կողմը՝ իրենց կերպարն ամբողջացնելով «հասարակ գյուղացու զավակ» լինելու գաղափարով: Որպես օրինակ՝ կարող ենք դիտարկել հայ իրականության մեջ գրեթե միշտ հանրային հակասական կարծիքներ ունեցող մի քանի քաղաքական գործչի: ՀՀ նախկին վարչապետ Սերժ Սարգսյանը, որ իրեն միշտ ներկայացնում է որպես «հասարակ ծնողի հասարակ զավակ», որի ծնողները նույնիսկ իրենց որդու պաշտոնավարման ընթացքում չլքեցին հայրենի գյուղը, բոլոր կենսագրական հարցազրույցներում հանրության ուշադրությունը կենտրոնացնում է այն փաստի վրա, որ չնայած իր ընտանիքի ունեցած սոցիալական ծանր պայմաններին, իրեն հանդիպած բազում խոչընդոտներին և զարտուղի ճանապարհներին՝ նա իր սեփական ուժերով է կարողացել հասնել իր քաղաքական կերպարի ստեղծմանը: Նույն քաղաքականությունն էին վարում նաև ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ ներկայիս վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Այս միֆերը նույնպես զերծ չեն մնացել որոշակի տեխնոլոգիաների կիրառումից: Շաբլոն արտահայտությունների կրկնության, տեղեկատվության կրկնողության, սեփական համոզմունքների երաշխիք տեխնոլոգիաները էլ ավելի ազդեցիկ են դարձրել մատուցվող տեղեկատվությունը:

Անցած ուղի: Բացի «հասարակ մարդ արարած լինելը» հերոս-փրկիչը պետք է լինի բազմաչարչար անձ, ով հաղթահարել է բազում խոչընդոտներ, քանիցս եղել է հալածված և չգնահատված: Սրանով ընդգծվում է վերջինիս անկոտրում կամք ունենալը, հայրենիքի հանդեպ սերը սեփական անձից վեր դասելը: Այս իմաստով հայ

իրականության մեջ գրեթե բոլոր քաղաքական գործիչները ներկայանում են «զինվորի» կարգավիճակով: Հաշվի առնելով անվտանգության սպառնալիքը՝ պատերազմի թոհուբոհով անցած յուրաքանչյուր ուժ հանդես է գալիս որպես պրոտագոնիստ(հերոս), իսկ նա, ով ունի քաղաքական գործչի լուրջ որակներ, բայց չի մասնակցել պատերազմին, չի ծառայել ՀՀ զինված ուժերում, հանդես է գալիս որպես անտագոնիստ(հակահերոս): Անցած ուղի կատեգորիայի մեջ է մտնում նաև քաղաքական առաջնորդի ստացած կրթությունը, մասնագիտական փորձը և որակները:

Հատկանիշներ: Հերոս փրկիչը պետք է օժտված լինի բազում դրական հատկանիշներով՝ հայրենասիրություն, մարդասիրություն, անձնվերություն, ուժեղ կամք և այլն: Հաճախ միֆի կայացման ճանապարհին քաղաքական գործիչները կարող են համեմատվել ժողովրդի կողմից արդեն իսկ սիրված կամ հեղինակություն ունեցող կերպարների հետ: Այս զուգորդումները ավելի են մեծացնում հանրության հավատը դեպի տվյալ անձը: Նման զուգորդումներ անցկացվել են Նիկոլ Փաշինյանի և Մոնթե Մելքոնյանի, Ռոբերտ Քոչարյանի և Վլադիմիր Պուտինի միջև: Հերոս-փրկիչները կարող են հանդես գալ «երկաթե լեդիի» (հուզականորեն կայուն, ինքնավստահ, երբեմն խիստ և դաժան), «ավագ քրոջ» (հենվում է որոշումների ընդունման կոլեկտիվ ձևերի վրա, խրախուսում է երկխոսությունները), աշխատամոլի (սիրում է աշխատել), «մոր» (հոգատար կերպար է) և այլ ռազմավարություններում (Շափաղաթյան 97):

Արտաքին տեսք և սիմվոլներ: Միֆի կերտման ճանապարհին քաղաքական ուժերը կարևորում են նաև գործիչների հագուստը, սանրվածքը, շարժումները, ոչ միայն վերբալ, այլև ոչ վերբալ հաղորդակցումը:

Կախարդական իրեր: Գործունեության ընթացքում հերոս-փրկիչը կարող է օգտագործել տարբեր սիմվոլիկ իրեր, որոնք ավելի են ընդգծում վերջինիս կերպարը: Այդ իրերը կարող են զուգորդվել տվյալ կերպարի հետ և տպավորվել հասարակության հիշողության մեջ: ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին միշտ կարելի էր տեսնել ծխախոտի գլանակով: Հաճախ նրա կերպարը նույնանում էր Ի. Ստալինի հետ, քանզի նա էլ հաճախ հանդես էր գալիս ծխամորճով: 2018 թվականին տեղի ունեցած իշխանափոխության ժամանակ ՀՀ ներկայիս վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր հետ միշտ ուներ պայուսակ, որը ձեռք էր բերել սիմվոլիկ նշանակություն (Ասրիյան և Մելքոնյան 79):

Վերոհիշյալ բաղադրիչների ներդաշնակ կիրառումը քաղաքական ուժերին հնարավորություն է տալիս հաջողել ընտրապայքարում և հասնել ցանկալի արդյունքի: Որքան էլ տեղեկատվական տեխնոլոգիաների առատությունը, ԶԼՄ-ների բազմազանությունը թափանցիկ դարձնեն քաղաքական ուժերի գործունեությունը, միևնույն է, դրանք չեն կարող անմասն մնալ միֆերի կիրառումից:

Եզրակացություններ

Քաղաքական յուրաքանչյուր սուբյեկտ միֆականացման կարիք է զգում: Հերոս-փրկչի միֆը քաղաքական ուժերին վերագրում է խարիզմատիկ հատկանիշներ, ձևավորում որոշակի իմիջ, որը կարող է սիրվել հանրային լայն շերտերի կողմից: Ռուս հայտնի հոգեբան Ս. Օլշանսկու համոզմամբ՝ իմիջը հենց գործառող առասպելն է, որն ամրագրված է տարաբնույթ տեքստերում: Արդյունավետ քաղաքական հաղորդակցման համար անհրաժեշտ է միֆականացնում, քանի որ միֆերը, հիմնվելով մարդկային անգիտակցականի վրա, լինելով չտարբերակված և առասպելացված, գալիս են պատասխանելու այնպիսի հարցերի, որոնցում գիտակցությունը փակուղի է մտնում: Պատահական չէ, որ հերոս փրկչի կերպարը ծնվում է այնպիսի հասարակություններում, որտեղ խոր ճգնաժամ է, հանրույթին բնորոշ են հուսալքությունն ու հոռետեսական տրամադրությունները: Նման պայմաններում

քաղաքական թիմերի ղեկավարները, հանրային կապերի մասնագետները չպետք է լուսանցքից դուրս թողնեն միֆերի կիրառման անհրաժեշտությունը, հակառակը՝ պետք է տիրապետեն բոլոր տեխնոլոգիաներին, քանի որ այսօր անհնար է հաջողել քաղաքական պայքարում, շահել հասարակության վստահությունը առանց քաղաքական միֆերի լայն կիրառության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասրիյան, Էլինա և Մելքոնյան, Նվարդ. *Հայաստանյան «Թավշյա» հեղափոխության միֆերը*. Բանբեր Երևանի Համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, թիվ 3 (27), Երևան, 2018, էջ 74-83:
2. Դեմիրճյան, Մովսես. *Միֆը ժամանակակից Հայաստանի քաղաքական համակարգում.* Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, թիվ 2 (32), Երևան, 2020, էջ 51-59:
3. Մելքոնյան, Նվարդ. *Առաջնորդի իմիջը քաղաքական գովազդում*. 21-րդ դար , Երևան, 2007, էջ 108:
4. Շափաղաթյան, Հասմիկ. *Լիդեր-քաղաքական գործչի հոգեբանական բնութագրերը*. Բանբեր Երևանի համալսարանի. Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, թիվ 3, Երևան, 2015, էջ 95-106:
5. Պետրոսյան, Դավիթ. *Մեդիատեքստ. ժամանակների երկխոսությունը*. ԵՊՀ հրատ., Երևան, 2022, էջ 66:
6. Ջրբաշյան, Էդուարդ և Մախչանյան, Հենրիկ. *Գրականագիտական բառարան*. Լույս հրատ., Երևան, 1972, էջ 26:
7. Жирарде, Рауль, *Политические мифы и мифологии. Политическая наука*.Теоретико-методологические и историко-культурные исследования. Москва., 1996, стр. 47-54.
8. Кассирер, Эрнст. *Техника современных политических мифов*. изд Йельского университета., Москва., 2013. стр. 277–296.
9. Ольшанский, Дмитрий, *Политическая психология*, изд. Питер СП, 2002, стр. 396.
10. Вадим, Руднев, *Словарь культуры XX века,* изд. Аграф, Москва., 1997, стр. 169.
11. Цуладзе, Автандил, *Политическая мифология.* изд ЭСКМО, Москва., 2003, стр. 383.
12. Элиаде, Мирча. *Аспекты мифа.* изд. Академический проект, Москва, 2010. стр. 53.

WORKS CITED

1. Asriyan, E'lina ev Melqonyan, Nvard. *Hayastanyan «T'avshya heghapoxut'yan» mifery*'. Erevan, [*The Myths of Armenian «Velvet» Revolution*] 2018. (In Armenian)
2. Culadze, Avtandil, *Politicheskaja mifologia*. Moskva, [*Political mythology*] 2003. (In Russian)
3. Demirtsyan, Movses. *Mify' jhamanakakic Hayastani qaghaghakan hamakargum*. Erevan, [*Myth in the Modern Political System of Armenia*] 2020. (In Armenian)
4. Girardet, Raul. *Politicheskie mify I mifologii. Politicheskaya nauka*. Moskva, [*Political Myths and Mythologies. Political Science*] 1996. (In Russian)
5. .Jeliade, Mircha. *Aspekty mifa*. Moskva, [*Aspects of Myth*] 2010. (In Russian)
6. Jrbashyan, E'duard ev Henrik, Maxchanyan. *Grakanagitakan bararan*. Erevan, [*Literary Dictionary*] 1972. (In Armenian)
7. Kassirer, Jernest. *Texnika sovremennix mifov*. Moskva, [*The Technique of Our Modern Political Myths*] 2013. (In Russian)

8. Melqonyan, Nvard. *Arajnordi imijy' qaghakan govazdum*. Erevan, [*The Image of the Leader in Political Advertising*] 2007. (In Armenian)
9. Olmjzshanskij, Dmitrij. *Poloticheskaya psixologiya*. Sankt Peterburg, [*Political Psychology*] 2002. (In Russian)
10. Petrosyan, Davit. *Mediateqst. Jhamanakneri erkxosutyuny'*. Erevan, [*Media Text: The Dialogue of Times*] 2022 (In Armenian)
11. Rudnev, Vadim. *Slovarmjz kulmjztury XX veka*. Moskva, [*Dictionary of 20th Century Culture*] 1997 (In Russian)
12. Shapaghatyan, Hasmik. *Lider-qaghaqakan gorc'chi hogebanakan bnut'agrery'*. Erevan, [*Psychological Features of a Leader-Politician*] 2015(In Armenian)

THE IMAGE OF THE SAVIOR HERO AS A FACTOR OF THE SOCIAL-PSYCHOLOGICAL EFFECT OF POLITICAL LEADERSHIP

LIANA MARTIROSYAN
Yerevan State University, Faculty of Journalism,
Chair of Communication and New Media, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The article reviews the main techniques and technologies of socio-psychological influence used in mass media to create the myth of the hero-savior.

The article aims to reveal the features of the myth of the hero-savior, which are substantiated by examples taken from Armenian reality.

The task of the work is to present a number of examples that reveal the way to create the image of a political leader from the image of a politician.

The methodological basis of the article is the methods of analysis, comparison, and generalization. During the research, we also applied the methods of combining and historicizing archival video materials, as well as other scientific materials.

It became clear from the study that every political subject is in need of mythification. The relevance of political myths grows in times of social crisis when society needs new, unifying symbols. Like the conspiracy myth, this becomes a form of communication between the society and the subject in politics.

Summing up this article, we can argue that the myth of the Hero-Savior gives political forces charismatic features, creates a certain image, without which it cannot be loved by the public.

Key words: *Myth, politics, political process, hero-savior, anti-hero, political leader, image.*

ОБРАЗ ГЕРОЯ - СПАСИТЕЛЯ КАК ФАКТОР СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ ПОЛИТИЧЕСКОГО ЛИДЕРСТВА

ЛИАНА МАРТИРОСЯН
аспирантка кафедры новых медиа и коммуникаций факультета журналистики
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

В данной статье рассмотрены основные приемы и технологии социально-психологического воздействия, используемые в средствах массовой информации при создании мифа о герое-спасителе.

В статье ставится задача раскрыть особенности мифа о Герое-спасителе, которые обосновываются примерами, взятыми из армянской действительности.

Задачей данной работы является представить ряд примеров, которые раскрывают путь создания образа политического лидера из образа политика.

Методологическую основу статьи составляют методы анализа, сравнения, и обобщения. В ходе исследования мы также применяли методы объединения и историзации архивных видеоматериалов, а также других научных материалов.

Из проведенного исследования стало ясно, что каждый политический субъект испытывает потребность в мифификации. Актуальность политических мифов возрастает во времена социального кризиса, когда обществу необходимы объединяющие символы. Подобно мифу о заговоре, это становится формой коммуникации между обществом и субъектом в политике.

Подводя итоги, мы можем утверждать, что миф о Герое-спасителе придает политическим силам харизматические черты, создает определенный образ, без которого он не может быть принят публикой.

Ключевые слова*: миф, политика, политический процесс, Герой-спаситель, антигерой, политический лидер, образ.*